# Ատոմ Էգոյան

*Կաննի կինոփառատոնի քառակի, կանադական «Ջինի» յոթնյակի և միջազգային կինոմրցույթների բազմակի մրցանակակիր, կանադահայ կինոռեժիսոր*



Կաննի կինոփառատոնի քառակի, կանադական «Ջինի» յոթնյակի և միջազգային կինոմրցույթների բազմակի մրցանակակիր, կանադահայ կինոռեժիսոր

Ծնվել է 1960թ. Կահիրեում՝ նկարիչների ընտանիքում:

1963թ. Ատոմի ընտանիքը Կահիրեից տեղափոխվել է Կանադա, որտեղ Եղոյան ազգանունը ձևափոխել են Էգոյանի:

Սովորել է Տորոնտոյի համալսարանում (միջազգային հարաբերությունների և երաժշտության բաժնում): Դեռ երիտասարդ տարիքում գրել է պիեսներ: Առաջին ֆիլմը՝ «Էկզոտիկան», նկարահանել է 1994թ., իսկ

1997թ. նկարահանած «Քաղցր ապագան» ֆիլմի համար նրան շնորհվել է «Լավագույն ռեժիսոր» մրցանակը:

Էգոյանին մեծ հռչակ է բերել 2002թ. նկարահանված «Արարատ» ֆիլմը: Անրի Վերնոյի «Մայրիկ» (1991թ.) ֆիլմից հետո այն դարձավ Հայոց ցեղասպանության մասին պատմող հաջորդ խոշոր կինոնկարը: Ավելի ուշ ֆիլմը շահեց «Ջինի» մրցանակ:

Բնակվում է Տորոնտոյում՝ կնոջ՝ կանադահայ դերասանուհի Արսինե Խանջյանի (ով Էգոյանի բազմաթիվ ֆիլմերի գլխավոր դերակատարն է) և որդու՝ Արշիլի հետ:

2006թ.-ից դասավանդում է Տորոնտոյի համալսարանում: